ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ռ. ԹՈՐՈՍՅԱՆԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. Մերժել ՀՀ սահմանադրական դատարանում «Նոր ժամանակներ» կուսակցության ներկայացուցիչ Ռ. Թորոսյանի՝ ՀՀ Ազգային ժողովին որպես հարակից պատասխանող ներգրավելու վերաբերյալ միջնորդությունը, հաշվի առնելով, որ նույնաբովանդակ միջնորդությունը մերժվել է ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ. հունիսի 4-ի ՍԴԱՈ-77 աշխատակարգային որոշման 2-րդ կետի ,,բ,, ենթակետով։

2. Մերժել ՀՀ սահմանադրական դատարանում «Նոր ժամանակներ» կուսակցության ներկայացուցիչ Ռ. Թորոսյանի՝ ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գ. Մալխասյանին, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 52 հոդվածի 2-րդ մասի, որպես վկա ներգրավելու վերաբերյալ միջնորդությունը, քանի որ հարակից պատասխանողի բացատրությունները բավարար են տվյալ գործի լուծման նպատակով եզրահանգման համար։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

7 հունիսի 2007 թ.
ՍԴԱՈ-84